Ի յիսնամյակ համազգային տօնի

Շուշի, 7 նոյեմբերի

Շուշում մի խումբ ձեռնհաս անձանց մէջ միտք է յղացել հայ տառերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի առիթով հրատարակել յօգուտ դպրոցական և գրական ֆոնդի մի ժողովածու «Սիւնիք» անունով։ Հրատարակիչների նպատակն է յիշեալ աշխատութեան միջոցով հասարակութեանը տալ պատմական ու աշխարհագրական ամփոփ տեղեկութիւններ Ղարաբաղի անցեալ ու ներկայ կեանքից։

Ժողովածուի աշխատանքներին մասնակցելու են այն անձինք, որոնք ծագումով ղարաբաղցի են, որպէսզի այս միջոցով նպաստեն տեղացի գրական ոյժերին մայրենի գրական ասպարէզը դուրս գալու։

Որովհետև գործին ձեռնարկողները միայն իրանք անկարող են հրատարակել այս ժողովածուն, ուստի և դիմում են երկրիս բոլոր տեղերում ապրող ղարաբաղցիներին, որ նրանք ուշադրութիւն դարձնեն այս կուլտուրական գովելի գործի վրա և իրանց կարողութեան չափ աջակցեն վերոյիշեալ անձանց այդ հասարակօգուտ ցանկութիւնը իրագործելու՝ ուղարկելով իրանց աշխատութիւնները ժողովածուի մէջ մտցնելու և նիւթական օժանդակութիւն այդ աշխատութիւնը հրատարակելու համար։

Ստեփան Վարդանեան